



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆՎԵՏԻՔ ԻՍՇԷՆԿՑԱՆ

(Մենդյան 80-ամյակի առթիվ)



րկար ու ուրուռն է եղել Ավետիք Իսահակյանի անցած գրական-ստեղծագործական ուղին, և հարուստ ու բազմակողմանի՝ նրա վաստակը: Ավ. Իսահակյանը բարձր է պահել հայ կյանքի գրականության, հայրենասիրության և ժողովրդասիրության ավանդները և իր բազմաթանր ստեղծագործության մեջ, որպես խոհուն քնարերգու, տարբեր ելևէջներով ու եղանակներով երգել է Հայրենիքի սերը, ժողովրդի ազատությունն ու ինքնուրույնությունը, մարդկային հոգու նուրբ ու խոր զգացումներն ու ապրումները: Կյանքի բոլոր պայմաններում ու հանգամանքներում Ավ. Իսահակյանը հանդես է եկել համաշխարհային կուլտուրայի ու գրականության, առանձնապես հայկական մշակույթի շերտ պաշտպանությամբ ու զնահատությամբ: Հայրենական Մեծ պատերազմի օրերին հայրենախոս բանաստեղծ և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ավ. Իսահակյանի ծայրը բարձր էր հնչում քնդդեմ ֆաշիստական ջարդարարների, հանուն մարդկության ստեղծած դարավոր մշակույթի, քաղաքակրթության ստեղծած մեծ նվաճումների ու հույակապ կոթողների պաշտպանության, հանուն աշխատավոր ժողովուրդների, հասարակ մարդու խաղաղ, ստեղծագործ կյանքի ու աշխատանքի պաշտպանության:

Ուսանելի և հետաքրքրական շատ կողմեր ունի Ավ. Իսահակյանի կյանքն ու գործունեությունը:

Բանաստեղծը ծնվել է 1875 թվականի հոկտեմբերի 30-ին (հին տոմարով՝ հոկտեմբերի 18-ին) Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) քաղաքում: Իսահակյանի մանկության ու պատանեկության տարիներն անցել են Ալեք-

սանդրոպոլից ոչ հեռու գտնվող Ղազարապատ գյուղում: Մի կողմից հայրենական բնությունը՝ Շիրակի ծաղկառատ մարգագետինները, «Մանթաշի երաղ հովիտը», «գուման հագած Ալագյազը», պղտոր ու հորդառատ Արազը, իսկ մյուս կողմից՝ պապենական ջրաղացում իջնանած հայրենակիցների պատմած հետաքրքրական դրույցներն ու պատմությունները, ժողովրդական երգիչների երգերն ու հեքիաթները խանգավառում և թև են տալիս պատանի Ավետիքի հարուստ երեվակայությանը: Իսահակյանը աշխարհամանալման առաջին տպավորություններն ստանում է հնամենի ավանդությունների և հուշեր ունեցող Շիրակում: «Միրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոն է եղել, — գրել է բանաստեղծը հետագայում, վերհիշելով պատանեկան կյանքի տպավորությունները, — որովհետև այնտեղ է, որ սկսել է բարախել իմ սիրտը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնում է սկիզբ առել իմ աշխարհաճանաչությունը... Հայկական անցյալ փառավոր կուլտուրայի այս վայրում՝ նվիրական Շիրակում եմ հյուանի իմ շքեղ երազները... (Երկերի ժողովածու, 4-րդ հատ., էջ 168):

Գեոևա 7—8 տարեկան հասակում ծնողները մանուկ Ավետիքին տանում են Շողո-բաջու մոտ՝ գրաճանաչություն սովորելու: Այնուհետև Իսահակյանը սովորում է Ալեքսանդրապոլի «Իհմակային հայոց հոգևոր դպրոց»-ում, Հառիճի վանքի երկդասյան դպրոցում և այլուր: Այս շրջանում Իսահակյանը ծանոթանում է հայ գրականության ու համաշխարհային գրականության՝ երկերին: Մական, Ավ. Իսահակյանի գրական ու հանրակրթական լուրջ ուսումնառությունը տեղի է ունենում էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որ-

տեղ և նա սկսում է իր գրական-ստեղծագործական առաջին փորձերը: Իսահակյանը վառ հուշեր է պահպանել Գևորգյան Ճեմարանից:

Առանձնապես ջերմ է եղել Իսահակյանի վերաբերմունքը իր գրական առաջին ուսուցչի՝ Ճեմարանի գրականության դասատու հայ նշանավոր բանաստեղծ Հովհաննես

Հրջադարձություններ է կատարում հայրենի բնության ծոցում, լինում ժողովրդի մեջ, ունկընդրում նրա ձայնին, ծանոթանում նրա նիստ ու կացին: Այս շրջանում գրած ստեղծագործություններն էլ կազմում են նրա գրական-գործունեության առաջին շրջանը: 1892 թվականին Իսահակյանը մեկնում է Թիֆլիս,



Ավետիֆ Իսահակյան

Նկար՝ Մ. Սարգսյանի

Հովհաննեսիսյանի նկատմամբ, որին նմանվելով՝ գրել է իր առաջին բանաստեղծությունները և որից ստացել է առաջին խորհուրդներն ու դիտողությունները: Իսահակյանը անհուն սիրով է հիշում երաժշտության և երգեցողության դասատու՝ հանճարիղ երաժշտագետ Կոմիտասին՝ «Սողոմոն հեղրորը» և ուրիշներին: Ճեմարանն ավարտելուց հետո Իսահակյանը լինում է հայրենական տանը,

ծանոթանում է Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի և այլ գրողների ու գործիչների հետ: Այս ծանոթությունները մեծ դեր են խաղում նրա մտահորիզոնի ու գրական ըմբռնումների լայնացման գործում: 1893 թվականին, ուսումը կատարելագործելու նպատակով, Իսահակյանը մեկնում է արտասահման, լինում է եվրոպական շատ քաղաքներում և պատմական վայրերում:

1895 թվականին վերադառնում է Հայրենիք՝ ընտանեկան հանդամանքների պատճառով: 1897 թվականին Ալեքսանդրապոլում ուլուս է տեսնում Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Երգեր ու վերքեր» խորագրով, որով նա միանգամից հայտնի է դառնում գրական հասարակությանը և վաստակում նրա սերն ու համակրանքը: Քիչ անցած Իսահակյանը նորից վերադառնում է արտասահման՝ հայաժամե և հետապնդված լինելով ցարական կառավարության կողմից: Իսահակյանի թափառական կյանքը արտասահմանում շարունակվում է մինչև 1926 թվականը: 1926 թվականին Իսահակյանը ոտք է դնում նոր Հայաստանի՝ Սովետական Հայաստանի հողի վրա: Հայրենի ժողովրդի նոր կյանքը ոգեշնչում է ոգևորում է հայրենախոս բանաստեղծին:

Իսահակյանի ստեղծագործության բնորոշ գծերից մեկը հայրենասիրությունն է: Հայրենիքի բախտը միշտ հուզել ու մտահոգություն է պատճառել բանաստեղծին: Արտասահմանյան տարագրության տարիներին հայրենի հիշատակներն ու նվիրական հուշերը բանաստեղծի հոգում միշտ վառ են պահել Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ ունեցած անմար սերն ու ոգևորությունը: «...Հայաստանը ես միշտ կրել եմ իմ հոգում, — գրել է բանաստեղծը, — ուր որ եղել եմ, Հայաստանը տարել եմ ինձ հետ: Նայել եմ Մոն Բլանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երեբունյքը և Հռիփսիմի տաճարը: Լսել եմ Նեապոլի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգով» (Ճերմկերի ժողովածու, 4-րդ հատ., էջ 169): Բանաստեղծը իր մի շարք ոտանավորների մեջ երգել է Հայրենիքի կարոտը անմիջական ու սրտահույզ պատկերներով: Իսահակյանի հայրենասիրական երգերի մեջ զգացվում է վիշտ և մորմոք, որ արդունք էր հայ ժողովրդի կրած դառն հալածանքների ու ավերածությունների: 90-ական թվականներին Սասունի և Աղանալի կոտորածները, ցարիզմի կազմակերպած հայթույրական ջարդերը և վերջապես համաշխարհային առաջին պատերազմի տարիներին (1914—1918 թ. թ.) թյուրք ջարդարարների կազմակերպած մասսայական կոտորածները Արևմտյան Հայաստանում անբուժելի վերք են առաջացնում բանաստեղծի հոգում: «Իմ մարդու, բնական հայրենասիրությունը, — գրում է նա, — վիրավորվեց, արյունոտվեց իմ ժողովրդի կրած անբերական լի ողբերգությամբ» (Ճերմկերի ժողովածու, 4-րդ հատ., էջ 169):

Բանաստեղծը երգում է Հայրենիքի գեղեցկությունները, շնորհակալով և Հայրենիքի «դարդը»:

«Է՛յ ջան-հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես,
Սարերդդ կորած երկնի մոլի մեջ,
Ջրերբրդ անուշ, հովերբդ անո՛ւշ,
Մենակ բալբերդ արուն-ծովի մեջ»:

Բայց ամենածանր փորձություններն ու դաժնություններն էլ անգամ չեն մթափում ու վհատեցնում բանաստեղծի հոգին ու երեակայությունը: Իսահակյանը վստահ էր ժողովրդի ստեղծագործ ու կորովի ջանքերին և պայծառ լավատեսությամբ տեսնում էր նրա հրաշագեղ զալիքը: Իր հոգվածներից մեկում այդ առթիվ Իսահակյանը գրել է. «...Հայ ժողովուրդը շատ արյուն թափեց այս անհավասար գոյամարտի մեջ, կոտորվեց և նվազեց շատ, բայց և այնպես կարողացավ իր նվիրական մատյանների շնորհիվ, իր գուժանի և աշխատանքի շնորհիվ պահպանել իր լեզուն, իր ոգին և ազգությունը: ...Մի ձեռքով Բուրկայծակին՝ պաշտպանել է նա իր հայրենի տունն ու աղբյուրը իրավունքը, մյուս ձեռքով՝ կուտուրայի զենքերը՝ հերկել է իր հողը և կերել իր արդար հացը, ստեղծել է հոյակապ դասական լեզուն, արվեստի հրաշալիքներ» (Ճերմկերի ժողովածու, 4-րդ հատ., էջ 192):

Իսահակյանը երգել է աշխատավոր մարդու կյանքն ու առօրյան, հուզվել է նրա վիճակով ու դրսևությամբ, «քարից-հողից հաց քամող» խեղճ աղքատի «դարդ ու ցավով»:

«Խեղճ աղքատը դառը դատի,—
Դատարկ նստի... Է՛յ աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրա, քար-աշխարհ»:

Իսահակյանի բանաստեղծությունների մեջ առանձնապես վառ արտացոլում է ստացել պանդխտությունը: Հետևելով ժողովրդական բանահյուսության և միջնադարյան բանաստեղծության ստեղծած ավանդներին, Իսահակյանը սրտահույզ ելևէջներով երգել է «ղարիքի կյանքը», դարիբուխյան մորմոքն ու տանջանքը («Պանդխտ որդին», «Կուռնկնիքը շարան-շարան», «Ձմեռն անցավ, եկավ գարուն» և այլն): Իսահակյանը բազմաթիվ ոտանավորների ու ավանդությունների մեջ մեծ վարպետությամբ երգել է մայրական ու որդիական սերը: Սերը դեպի մարդը առհասարակ, կարեկցանքն ու մտահոգությունը տնանկների ու տառապալների նկատմամբ Իսահակյանի բանաստեղծության բնորոշ գծերից մեկն է: Դեռևս իր սկզբնական շրջանի բանաստեղծություններից մեկում Իսահակյանը երգել է.

«— Սի՛րտս երկինք է...
Ամեն արարած
Աստղ ունի այնտեղ—
Գահ ունի այնտեղ»:

Այսուհանդերձ Իսահակյանի բանաստեղծությունը մարտաշունչ է. վշտով ու մորմոքով հեղափոխության աշխատավորի տառապանքը, նա բուն ցասումով բողոքում է հասարակական շարիքի, բռնության ու անիրավության դեմ, հանուն ներգաղնակ ու խաղաղ մարդկային հարաբերությունների: Բողոքի այդ ձայնը Իսահակյանը հնչեցրել է մի շարք բանաստեղծություններում, ինչպես և «Աբու-Լալա-Մահարի» նշանավոր պոեմում, որը թարգմանված է աշխարհի մի շարք ժողովուրդների լեզուներով, և հայ ժողովրդական հերոսական փայտից վերցրած «Սասմա Մհեր» վիպերգի մեջ:

Իսահակյանի կապը ժողովրդի հետ արտահայտվել է նաև ժողովրդական ձևերի լայն օգտագործմամբ և ընդհանրապես ժողովրդական բանահյուսության հետ ունեցած անխզելի կապերով: Ժողովրդական ստեղծագործությունը, իմաստուն ու պայծառ ընդհանրացումներով, արտահայտչական, գունեղ ձևվերով ու պատկերներով մեծ դեր է խաղացել Իսահակյանի ստեղծագործության ժողովրդականացման գործում: Իր բեղուն գրական գործունեության ընթացքում Իսահակյանն օգ-

տագործել է ժողովրդական բանահյուսության դրեթի բոլոր տեսակները: Մեծ բանաստեղծը, սակայն, չի սահմանափակվել միայն հայրենի բանահյուսությամբ: Երկար շրջագայությունների և հարուստ կենսափորձի շնորհիվ Իսահակյանը գրական ստեղծագործության նյութ է դարձրել աշխարհի տարբեր ժողովուրդների բանահյուսության լավագույն նմուշները: Այնտեղ կարելի է գտնել չինական ու հնդկական ավանդություններ, հրեական առասպելներ, պարսկական և թաթարական զրույցներ, սերբական լեգենդ, քրդական պոեմ և այլն: Այդ ստեղծագործությունների մեջ Իսահակյանը հարազատորեն պահպանել է աշխատավոր ժողովրդի առողջ կենսահայեցողությունը, ժողովուրդների բարեկամության ու խաղաղ գոյակցության գաղափարները:

Իսահակյանի պոեզիան աչքի է ընկնում բանաստեղծական վարպետության և գեղարվեստական արտահայտչական ձևերի բազմազանությամբ: Սովետական ժամանակակից բանաստեղծները մեծ ականածանքով են մոտենում Իսահակյանի պոեզիային, այնտեղ գտնելով ուսանելի ու դաստիարակչական շատ դժեք, ժողովրդին սիրելու և ժողովրդի հետ ունեցած կապերի գեղեցիկ օրինակներ:

